**Հավելված N 1**
**« ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22» ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«Երևանտրանս» ՓԲԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի « 1 » չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Երևանտրանս» ՓԲԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«Երևանտրանս» ՓԲԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00009381:

Միաժամանակ սույնով ես՝ «Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Արման Մխիթարյանս հայտարարում և հավաստում եմ, որ

1)«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին հայտով գնային առաջարկը ներկայացվել, իսկ աճուրդի ընթացքում նոր գնային առաջարկները ներկայացվելու են իմ կողմից:

2) «Երևանտրանս» ՓԲԸ-ն բավարարում է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3) «Երևանտրանս» ՓԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ «Երևանտրանս» ՓԲԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Երևանտրանս» ՓԲԸ-ի_կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Երևանտրանս» ՓԲԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև «Երևանտրանս» ՓԲԸ-ն ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում է, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ

| | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|
| | Երևանի քաղաքապետարան | Երևանի քաղաքապետ Հայկ Մարության | |

Միաժամանակ հաստատում եմ, որ էլեկտրոնային աճուրդի մասնակցության դիմում-հայտարարությունում, ինչպես նաև այսուհետ համակարգով սույն ընթացակարգի կամայական փուլում (գնառաջարկ, որակավորում, պայմանագրի կնքում և այլն) տրամադրված ամբողջ տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը: Հավաստում եմ նաև, որ տեղեկացված եմ, որ դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագիրը (PIN կոդը) հանդիսանում է փակ գաղտնի տեղեկատվություն, և որ պատասխանատու եմ ինձ տրամադրված ծածկագրի անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝ համակարգում կատարված ցանկացած գործողության համար:

Digitally signed by SOGHOMONYAN HRIPSIME 6712750105
Date: 2018.12.20 10:48:22

«Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Ա.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ЗАО "ЕРЕВАНТРАНС"

ՀՀ, 0031, ք.Երևան, Լենինգրադյան 16

☎ (011)390244

«20» 12 2018թ.

№ N-863

# Լ Ի Ա Զ Ո Ր Ա Գ Ի Ր

Քաղաք Երևան, երկու հազար տասնութ թվական, դեկտեմբերի քսան

«Երևանտրանս» ՓԲԸ-ն՝ ի դեմս տնօրենի ժ/պ՝ Ա.Մխիթարյանի, լիազորում է ընկերության գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Սողոմոնյանին (ք.Երևան, Տիգրան Մեծի պ., 36 շ., բն. 30, անձնագիր AN0765703, տրված 17.12.2013թ. 009-ի կողմից) ընկերության անունից էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պահանջվող փաստաթղթերը:

Լիազորագիրը տրվում է երկու ամիս ժամկետով:

Տնօրենի ժ/պ Ա.Մխիթարյան

"ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ" "ЕРЕВАНТРАНС" "YEREVANTRANS" 00009381